Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Պ-129-15.09.2017,09.11.2017-ՊԻՄԻ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը լրացնել նոր 130.1-ին հոդվածով.

«Հոդված 130.1. Բուժաշխատողների մասնագիտական ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեությանը խոչընդոտելը

1. Բուժաշխատողի մասնագիտական, ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեությանը խոչընդոտելը, որը կատարվել է նրա նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով՝
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկից հինգ հարյուրապատիկի չափով:

2. Բուժաշխատողի մասնագիտական, ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեությանը խոչընդոտելը, որը կատարվել է նրա նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝
պատժվում է կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից նոյեմբերի 8-ի նիստում քննարկված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	**2**	**3**	**4**	**5**
1.	**Պատգամավորներ Հակոբ Հակոբյան, Մարինա Մարգարյան**	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» նախագծի վերնագրում և 1-ին հոդվածի 2-րդ մասում	Առաջարկվում է նախագծի «մասնագիտական» բառը փոխարինել «ծառայողական» բառով:	**Ընդունվել է այլ խմբագրությամբ:**	**Ընդունվել է:**
2.	**«ԾԱՌՈՒԿՅԱՆ խմբակցություն»**	Հոդված 1	ՀՀ քրեական օրենսգրքի լրացվող 130.1 հոդվածի վերնագրում, 1-ին և 2-րդ մասերում «մասնագիտական» բառից հետո լրացնել «ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**